Մեր ՀԱՅՐԸ սուրբ Ավետարանն է, ՄԱՅՐԸ մեր՝ Առաքելական սուրբ Եկեղեցին (Եղիշե, Ե դար):

Որդյակ իմ, ՀՈՐԴ խրատը լսիր ու ՄՈՐԴ օրենքը մի մերժիր (Առակ. 1:8):

Այն աչքը, որ իր ՀՈՐԸ կծաղրի և իր ՄՈՐԸ հնազանդվելը կանարգի, ձորերի ագռավները պետք է փորեն ու արծիվների ձագերը պետք է ուտեն (Առակ. Որդյա՛կ իմ, ՀՈՐԴ խրատը լսիր ու ՄՈՐԴ օրենքը մի 30:17):

Եվ դարձյալ տալիս եմ ձեզ խորհուրդը սուրբ ԵԿԵՂԵՑՈՒ. ինչ բարի գործ որ կատարեք, թող լինի բարեգործություն և փառք հանդերձյալ կյանքի համար: Ամեն (Արձակում):

ԽՐԱՏԱՆԻ ԱՊԱՇԽԱՐՈՒԹՅԱՆ

Գիրք 4

Առաջաբան

«Խրատանի ապաշխարության» մատենաշարի այս հատորյակը նպատակ ունի մեծ պահքի շրջանում հավատավոր քրիստոնյաներին առաջնորդելու՝ ապաշխարության ընթացքի մեջ հաստատվելու: Սբ. Կյուրեղ Ալեքսանդրացու քարոզը կարող է մեր մեջ երկյուղ առաջացնել, որը և կմղի մեզ աղոթական վիճակի մեջ հաստատվելու, որին կարծում ենք, կնպաստեն գրքույկում զետեղված ապաշխարության երգերը, շարականները, աղոթքները և սաղմոսները: Թեև սրանք գրաբար են, բայց համեմատաբար մատչելի: Ապաշխարության ութ շարականները և հինգ «Թագավոր հավիտյան»-ները մեծ պահքի շրջանում, բացի շաբաթ և կիրակի օրերից, ամեն օր երգվում են ժամերգության ժամանակ: Եկեղեցին իր ժամակարգությունները կատարում է ըստ ութ ձայների՝ Ա, Ակ, Բ, Բկ, Գ, Գկ, Դ, Դկ: Ութ ապաշխարության շարականներն ունեն իրենց ձայները, և եթե օրինակ, երկուշաբթի օրվա ձայնը Ա է, ըստ օրացույցի, ուրեմն՝ այդ օրը երգվում է Ա ձայնի շարականը: Ամեն շարականի կողքին նշված է, թե ինչ ձայնի է այն պատկանում: Այնպես որ, եկեղեցու օրացույցով ճշտելով օրվա ձայնը, կարող եք ձեզ հետ վերցնել այս գրքույկը և հետևել օրվա ապաշխարության շարականին, այդ ընթացքում, ինչու չէ, նաև սովորել ինքնուրույն երգել: Այս ութ շարականները, ըստ օրվա ձայնի, ամբողջ տարվա ընթացքում ամեն պահոց օր երգվում են: Երգվում է նաև ապաշխարության «Թագավորքը», սակայն սա ոչ թե ըստ ձայնի, այլ՝ ըստ օրվա: Այսինքն՝ երկուշաբթին իր «Թագավորքն» ունի, երեքշաբթին՝ իր և այլն: Օրվա ութ ձայներն արտասանվում են հետևյալ կերպ.

Ա-ն՝ Այբ-ձա, Ակ-ն՝ Այբ կե, Բ-ն՝ Բեն-ձա, Բկ-ն՝ Բեն կե, Գ-ն՝ Գիմ-ձա, Գկ-ն՝ Գիմ կե, Դ-ն՝ Դա-ձա, Դկ-ն՝ Դա կե:

Սուրբ Կյուրեղ Ալեքսանդրացու խոսքը հոգու ելքի և ահավոր դատաստանի մասին

Վախենում եմ մահից, որովհետև այն դառն է: Դողում եմ անվախճան գեհենից: Սարսափում եմ տարտարոսից, որտեղ չնչին տաքություն իսկ չկա: Վախենում եմ խավարից, որտեղ չկա լույսի ամենաչնչին առկայծում:

Սարսռում եմ որդերից, որոնք անդադար պիտի ծվատեն, և որոնց պատճառած տանջանքը վախճան չի ունենալու: Զարհուրում եմ ահեղ հրեշտակներից, որոնք պիտի ներկա գտնվեն դատաստանին: Սարսափը պատում է ինձ, երբ խորհում եմ անաչառ և արդար դատաստանի, նաև՝ ահեղ ատյանի օրվա մասին: Ահն ու դողն է պատում ինձ՝ կրակե գետից, որը հոսում է գահի առջևից և եռում է՝ սարսափազդու բոցեր արձակելով, նման սրասույր թրերի: Վախենում եմ անդադար տանջանքներից:

Դողդողում եմ վերջ չունեցող պատիժներից: Զարհուրում եմ մթությունից: Վախենում եմ շոշափելի խավարից: Վախենում եմ կապանքներից, որոնք երբեք չեն արձակվելու, ատամների կրճտոցից, անմխիթար լացից, անխուսափելի մերկացումներից:

Արդար Դատավորը չի պահանջի ոչ ամբաստանողների, ոչ վկաների, կարիք չի ունենա կողմնակի ցուցմունքների կամ հանցանշանների, այլ բոլորը, ինչ-որ մենք արել ենք, ինչի մասին խոսել ենք, ինչի մասին մտածել ենք, այդ ամենն ի հայտ կբերի մեր՝ մեղավորներիս աչքերի առջև: Այնժամ ոչ ոք չի բարեխոսի մեզ համար, ոչ ոք չի ազատի տանջանքներից, ո՛չ հայրը, ո՛չ մայրը, ո՛չ աղջիկը, ո՛չ բարեկամներից որևէ մեկը, ո՛չ հարևանը, ո՛չ ընկերը, ո՛չ բարեգործը: Եվ ոչինչը չի ազատի՝ ո՛չ ինչքերի բաժանումը, ո՛չ մեծ հարստությունը, ո՛չ կարողության հպարտությունը: Այս բոլորը որպես հող հողին պիտի դառնա: Եվ դատապարտյալը միայնակ պիտի սպասի դատավճռին, որն ըստ գործերի, կամ կազատի իրեն պատժից, կամ՝ կդատապարտի հավիտենական տանջանքների:

Օ՜, վա՜յ ինձ, վա՜յ ինձ: Խիղճս ինձ պիտի մերկացնի, Սուրբ Գիրքը պիտի վկայություն տա իմ դեմ՝ դիմակազերծ անելով ինձ:

Ո՜վ անձ իմ անարժան, շնչող պղծությամբ և զազրելի քո գործերով: Ավա՜ղ ինձ, ես ապականեցի մարմնավոր տաճարը և տրտմեցրի Սուրբ Հոգուն: Ո՜վ Աստված, ճշմարիտ են Քո գործերը, ուղիղ են ճանապարհները Քո և անքննելի՝ Քո դատաստանները: Հանուն ժամանակավոր և մեղավոր հաճույքների հավիտյան տանջվում եմ, մարմնավոր ցանկասիրության պատճառով տրվում

եմ կրակին: Արդար է դատաստանն Աստծու, որովհետև, երբ ինձ կանչեցին՝ ես չլսեցի, սովորեցրին՝ չընդունեցի խրատները, ապացուցում էին ինձ, իսկ ես քամահրանքով էի վերաբերվում: Իսկ ինչ-որ կարդացի և իմացա, հավատքի չարժանացրի: Ես ինձ համար վնասակար չհամարեցի անհոգության մեջ մնալը, ծուլությունը ու ծանծրույթը, այլ ժամանակը անցկացնելով անօգուտ թափառումներով և դատարկախոսությամբ, սիրում էի հաճույք ստանալ և հագենալ աշխարհի ունայնությամբ և իրարանցմամբ:

Աշխարհիկ ուրախություններով և զվարճություններով անցկացրեցի տարիներս, ամիսներս և օրերը կյանքիս, աշխատեցի, ջանացի, չարչարվեցի, բայց բոլորը դատարկ հոգսերի, ժամանակավորի, ապականյալի և երկրավորի համար:

Բայց ինչպիսի սարսափի և դողի է ենթարկվում անձը, ինչպիսի պայքար է նրան սպասում, և ինչպիսի պաշար պիտի կուտակի նա՝ մարմնից հոգու ելքի անխուսափելի օրվա համար: Սրա վրա ես ուշադրություն չդարձրի և ժամանակին չմտածեցի: Իսկ այդ միջոցին, երբ հոգին ելնում է մարմնից, մեզ շրջապատում են մի կողմից երկնային բանակները և զորությունները, իսկ մյուս կողմից՝ խավարի պետերը, թշնամական զորությունները, որ իրենց իշխանության տակ ունեն այս չար աշխարհը, այստեղ են նաև օդային մաքսատների իշխանները, օդային խոշտանգիչները և վերակացուները մեր գործերի, և նրանց հետ՝ առաջին մարդասպան սատանան, իր չարության մեջ զորավոր, որի լեզուն, մարգարեի խոսքի համեմատ, նման է սուր ածելու (Սաղմոս 51:4), և որ նստած է որպես դարանակալ առյուծ (Սաղ-

մոս 9:29-30), մեծ օձը, ուրացողը, դժոխք, որը բացել է իր երախը, խավարի իշխանության պետը, մահվան տիրապետության տերը, որը ինչ-որ հատուկ ձևով խոշտանգում է հոգին՝ ներկայացնելով և թվարկելով բոլոր մեղքերը և անօրենությունները, որ գործվել են մեր կողմից գործով, խոսքով, կամա և ակամա, երիտասարդությունից մինչև վախճանը, երբ հոգին բարձրանում է Աստծո դատաստանին:

Պատկերացնո՞ւմ ես, ո՜վ անձ իմ, ինչպիսի՜ վախ և սարսափ պիտի պատի քեզ այն օրը, երբ տեսնես սարսափելի, վայրենի, դաժան, անխիղճ և անամոթ դևերին, որոնք պիտի կանգնեն քո առջև, որպես մռայլ խոշտանգիչներ: Միայն նրանց տեսքն իսկ բոլոր տանջանքներից զարհուրելի է: Նայելով նրանց, հոգին ընկնում է խռովքի և անհանգստության մեջ, տագնապում է, աշխատում է թաքնվել, որպեսզի չտեսնի նրանց, ապավինելով Աստծո հրեշտակների օգնությանը:

Հոգին, ստանալով հրեշտակների աջակցությունը, վեր է բարձրանում՝ անցնելով օդային տարածքով, իր ճանապարհին հանդիպելով մաքսատներին, որոնք դևերի զատորոշված խմբեր են, որ ներկայացնում են հոգուն այն մեղքերը, որոնք հատուկ են յուրաքանչյուր մաքսատանը:

Առաջին մաքսատունը խոսքի և սև ատելությանն է: Այստեղ ոգիների կողմից ներկայացվում են այն մեղքերը, որոնք անձը գործել է խոսքով, ինչպիսիք են՝ սուտը, զրպարտությունը, նզովքը, ուխտադրժությունը, ունայնախոսությունը, չարախոսությունը, դատարկաբանությունը, սրբապիղծ խոսքերը, հայհոյությունը: Նրանց միանում են որկրամոլության, շնության, հարբեցողու-

թյան, անզուսպ ծիծաղի, անպարկեշտ ու անմաքուր համբույրների և անառակ երգերի մեղքերը:

Սրանց հակառակ, սուրբ հրեշտակները, որոնք ժամանակին խրատում և առաջնորդում էին մարդուն բարի գործերի մեջ, ի հայտ են բերում այն, ինչ բարի բան որ խոսվել և ասվել է նրա կողմից: Մատնացույց են անում աղոթքները, գոհությունները, սաղմոսերգությունն և հոգևոր երգերը, Սուրբ Գրքի ընթերցումը, մի խոսքով, ներկայացնում են այն ամենը, ինչ մենք լեզվով և շուրթերով մատուցել ենք՝ ի փառս Աստծու: Երկրորդը՝ շողոքորթության և աչքի տեսածով գայթակղվածության մաքսատունն է: Սրանք վեր են հանում այն, ինչով խոցվել է մեր տեսողությունը, ինչ հաճո է եղել աչքին, և իրենց կողմ են քարշ տալիս նրանց, ովքեր հակում են ունեցել անպարկեշտ հայացք գցելու, անպիտան հետաքրքրության, սանձարձակ հայացքների:

Երրորդը՝ ականջներին քրթմնջացողների, լսողության զգացումին հագուրդ տվողների մաքսատունն է: Այն ամենը, ինչը սրանց տնօրինությամբ շողոքորթաբար գրգռում է մեր լսողությունը և կրքոտորեն բերկրանք պատճառում մեզ, այսինքն՝ բոլորը, ինչին լսելու տենչանքով կապված են եղել նման բաների սիրահարները, գրանցված են նրանց կողմից, և պահում են այն՝ մինչ Դատաստանի օրը:

Չորրորդ մաքսատունը հոտառությամբ հմայողների համար է: Սրանք հոտառության միջոցով կրքոտորեն հաճույք են ստացել, օրինակ, անուշահոտություններով՝ օծանելիքներով, և նմանօրինակ բաներով, որոնք հիմնականում օգտագործում են անառակ կանայք՝ գայթակղելու համար: Եվ այս ամենը գրանցվում է այս մաք-

սատան հսկիչների կողմից:

Հինգերորդ մաքսատունը հսկում է այն ամենը, ինչ չար և անպիտան բան, որ արվել է ձեռքի շոշափումով:

Մյուս մաքսատներն են՝ ոխակալության, նախանձի և խանդի, փառամոլության և հպարտության, դժգոհության և բարկության, դյուրաբորբոքության և ցասումի, պոռնկության, շնության և ձեռնաշարժության (օնանիզմ), նաև՝ սպանության և կախարդության և Աստծո առջև այլ զազրելի և պիղծ գործերի, որի մասին այս անգամ մանրամասն չենք խոսում, որովհետև կպատմենք մի ուրիշ անգամ, ճշգրիտ հերթականությամբ, քանի որ ամեն մի հոգևոր կիրք և ամեն մի մեղք ունեն իրենց ներկայացուցիչները և խոշտանգիչները:

Տեսնելով այս ամենը, և ավելին ու առավել վատթարը, անձը սարսափում է, դողդոջում, երերում և ընկնում խռովքի մեջ, մինչև որ չհրապարակվի դատավճիռը՝ ազատ արձակման կամ դատապարտության: Ի՜նչ դժնդակ, հիվանդագին, ողբալի և անմխիթար է այդ սպասման ժամը, երբ տառապում ես անհայտությունից ու սպասում, թե ինչ կլինի:

Երկնային զորությունները կանգնած են անմաքուր ոգիների դիմաց և բերում են հոգու բարի գործերը, որ արվել են խոսքով, մտադրությամբ, դիտավորությամբ և մտքերով, բարի և չար հրեշտակների միջև կանգնած է հոգին՝ ահով և դողով, մինչև իր խոսքերի և արած գործերի համար տրվելով դատապարտության՝ կկապկըպվի, կամ՝ արդարացվելով, ազատ կարձակվի, քանի որ յուրաքանչյուրը պիտի կապվի իր իսկ գործով, սեփական մեղքերի կապանքներով:

Եվ եթե հոգին իր ապրած առաքինի կյանքի համար

այս ժամին արժանի և աստվածահաճո լինի, այնժամ ընդունում են նրան Աստծո հրեշտակները, և արդեն առանց տրտմության, շարունակում է նա իր երթը՝ որպես ուղեկից ունենալով սուրբ զորություններին, ինչպես ասում է Սուրբ Գիրքը. «Որքան պիտի ուրախանան քեզանով բոլոր նրանք, որոնց բնակությունը քեզանից է» (Սաղմոս 86:7):

Եվ կատարվում է գրվածքը. «Պիտի վերադառնան ու ցնծությամբ գան Սիոն, և նրանց գլխի վրա հավիտենական ուրախություն պիտի լինի, օրհնություն և ցնծություն պիտի լինի, նրանց գլխի վրա ուրախությունը պիտի դիմավորի նրանց, ցավը, տրտմությունն ու հեծությունը պիտի անհետանան» (Եսայի 35:10):

Հոգին՝ ազատվելով նենգ, չար և սարսափելի ոգիներից, ժառանգում է անպատմելի խնդությունը: Իսկ եթե պարզվի, թե որևէ հոգի ապրել է անհոգությամբ և ցոփությամբ, ապա նա կլսի այն ահավոր ձայնը, թե. «Ով երկրի վրա արդարություն չի ուսանում, նա ճշմարիտ բան չի կատարի: Թող կորչի ամբարիշտը, որպեսզի չտեսնի փառքը Տիրոջ» (Եսայի 26:10):

Եվ կսկսվեն նրա համար օրեր՝ բարկության, ողբի, կարիքի և նեղության, օրեր՝ մթի և խավարի:

Սուրբ հրեշտակները թողնում են նրան, և նա տրվում է մթագնած դևերի իշխանությանը, որոնք սկզբում անխղճորեն տանջում են նրան և հետո՝ անքակտելի կապանքներով նետում մութ և խավար երկիրը, նրա ստորին մասերը, սանդարամետային զնդանները, դժոխքի բանտախցերը, որտեղ գտնվում են բոլոր ժամանակների մահացած մեղավորների հոգիները, մթության և մռայլության երկիրը, երկիր հավիտենական խավարի

«…մինչև այնտեղ գնամ, որտեղից երբեք չեմ դառնալու՝ երկիրն այն խավարին ու մթին, երկիրը, ուր հավերժ աղջամուղջ է տիրում, և որտեղ լույս չկա, ու ոչ ոք չի կարող տեսնել կյանք մարդկային» (Հոբ 10:21-22):

Որտեղ հաստատված է հավիտենական ցավ, անվերջանալի տրտմություն, անդադար լաց, ատամների չնվազող կրճտոց և անընդմեջ հոգոցներ: Այնտեղ սուգ է, հավիտենական սուգ: Վա՜յ ինձ, վա՜յ ինձ՝ ձայնում է հոգին, և չկա օգնական, աղաղակում են, և ոչ ոք չի ազատում: Անհնար է վերապատմել այն ծայրահեղ, դժնդակ և խղճալի վիճակը, լեզուն հրաժարվում է արտահայտել բանտարկված հոգիների ցավերը և տանջանքները: Մարդկանցից ոչ ոք չի կարող պատկերացնել վախը և սարսափը, ոչ մի մարդկային լեզու ի վիճակի չէ արտահայտելու այն դժբախտությունը և նեղությունը, որ կրում են բանտարկյալները: Հեծեծում են նրանք մշտապես և անդադար, և չկա ողորմացող: Կանչում են, և ոչ ոք չի լսում: Հեկեկում են, և ոչ ոք չի մխիթարում, ոչ ոք չի շտապում օգնության: Աղաղակում են և մորմոքում, բայց ոչ ոք չի ցուցաբերում ողորմություն և կարեկցանք: Այն ժամ, որտե՞ղ պիտի գտնվի այս աշխարհի գովքը, որտե՞ղ՝ փառամոլությունը, որտե՞ղ՝ կերակուրը, ո՞ւր է վայելքը, ո՞ւր՝ գոհունակությունը և գերհագեցումը, ո՞ւր են ապագա ծրագրերի երազանքները, ո՞ւր է հանգիստը, ո՞ւր՝ խաղաղությունը, ո՞ւր է ազնվականությունը, ո՞ւր է գեղեցկությունը, ո՞ւր է մարմնի ամրությունը, ո՞ւր՝ կանացի խաբուսիկ և կորուսիչ գեղեցկությունը, ո՞ւր է հանդուգն անպատկառությունը, ո՞ւր են գեղեցիկ հագուստները, ո՞ւր՝ անմաքուր և նողկալի քաղցրությունը մեղքի, ո՞ւր է զազրելի

հաճույքը արվամոլության, ո՞ւր է անուշահոտություններով օծման բուրմունքը, ո՞ւր են թմբուկներով և տավիղներով խրախճանքները, ո՞ւր է մեծամտությունը նրանց, ովքեր ապրում էին առանց որևէ երկյուղի, ո՞ւր է դրամի և ունեցվածքի հանդեպ կիրքը և նրանից ելնող անողորմությունը, ո՞ւր է անմարդկային հպարտությունը, որ գարշում է բոլորից և ներշնչում հարգել միայն ինքն իրեն, ո՞ւր է դատարկ և ունայն մարդկային փառքը, ո՞ւր է պիղծ և անհագուրդ վավաշոտությունը, ո՞ւր է մեծությունը և տիրակալությունը, ո՞ւր է թագավորը, ո՞ւր է իշխանը, ո՞ւր է քահանան, ո՞ւր է ուսուցիչը, ո՞ւր է բազում հարստությամբ հպարտացող և աղքատների հանդեպ անողորմն ու Աստծուն արհամարհողը, ո՞ւր են թատրոնները, զվարճությունները ու հանդիսությունները, ո՞ւր են վավաշոտները, ծիծաղկոտները, ծաղրողները և անհոգ ապրողները, ո՞ւր են փափուկ հանդերձները և անկողինը, ո՞ւր են բարձրահարկ տները և լայն դարպասները, ո՞ւր են անվախ ապրողները:

Այնժամ, տեսնելով իրենց առանց այս բոլորի՝ զարհուրում են և զարհուրած աղաղակում, խռովված շարժումներ անում, ահը, դողը և ցավը պատում են նրանց, ինչպես ծննդաբերող կնոջը, և ինչպես փոթորկի կողմից դեպի կործանում քշվածին:

Ո՞ւր է իմաստունների իմաստությունը, հռետորների ճարտասանությունը և ունայն գիտությունը: «Խռովվեցին նրանք, երերացին հարբածի պես, և նրանց ողջ իմաստությունը կուլ գնաց» (Սաղմոս 106:27):

«Ո՞ւր է իմաստունը, ո՞ւր՝ բանգետը, ո՞ւր՝ այս աշխարհի քննողը: Չէ՞ որ Աստված հիմարացրեց այս աշխարհի իմաստությունը. քանզի աշխարհն իր իմաստու-

թյամբ չճանաչեց Աստծուն՝ նրա իմաստությամբ» (Ա Կորն. 1:20):

Ով եղբայրներ, մտածեք, թե ինչպիսին է վայել մեզ լինել, մեզ, որ պարտավոր ենք տալ մանրամասն հաշվետվություն՝ մեր յուրաքանչյուր վարմունքի համար՝ և՛ մեծի, և փոքրի: Նույնիսկ, ամեն պարապ խոսքի համար մենք պատասխան պիտի տանք Արդար Դատավորին (Մատթ. 12:36): Մյուս կողմից, ինչպիսի՞ն պետք է լինենք, որպեսզի այդ ահավոր ժամին ստանանք Աստծու ողորմությունը, որպեսզի մեզ միմյանցից բաժանելու ժամանակ, արժանանանք դասվելու Երկնավոր Թագավորի աջ կողմում: Ի՞նչ աստիճանի է պետք մեզ պատրաստվել այն անճառելի ուրախությանը, որպեսզի արժանանանք լսելու երանավետ ձայնը թագավորների Թագավորի, ուղղված նրանց, ովքեր կլինեն նրա աջ կողմում. «Այն ժամանակ թագավորը պիտի ասի նրանց, որ իր աջին են. «Եկեք, իմ Հոր օրհնյալնե՛ր, ժառանգեցե՛ք աշխարհի սկզբից ձեզ համար պատրաստված արքայությունը» (Մատթ. 25:34):

Այն ժամ կժառանգենք երանությունը. «Ինչ որ աչքը չտեսավ, և ականջը չլսեց, և մարդու սիրտը չընկավ, Աստված այն պատրաստեց իր սիրելիների համար» (Ա Կորնթ. 29): Եվ այն ժամ, մեզ էլ չեն խռովի ոչ մի տրտմություն, ոչ մի հիվանդություն և անհանգստություն: Հաճախ խորհենք այս մասին:

Պատկերացնենք նաև մեղավորների անվերջանալի տանջանքները, և այն, թե ինչպիսի ամոթ պիտի կրեն նրանք արդար Դատավորի առջև, երբ տրվեն ահավոր ատյանին: Նրանք ի վիճակի չեն լինելու ասելու և ոչ մի խոսք՝ իրենց արդարացման համար: Ինչպիսի խայտառակության պիտի ենթարկվեն, երբ զատվելով, դրվեն Թագավորի ձախ կողմը: Ինչպիսի՜ խավար պիտի պատի նրանց, և ինչպիսի՜ խռովք, երբ Տերն Իր բարկությամբ և զայրույթով դիմի նրանց. «Այնժամ կխոսի նրանց հետ իր բարկությամբ և իր զայրույթով կսարսափեցնի նրանց» (Սաղմոս 2:5):

Այն ժամանակ Նա պիտի ասի նրանց, որ իր ձախին են. «Անիծյալնե՛ր, գնացե՛ք ինձանից հավիտենական կրակը, որ պատրաստված է սատանայի և իր հրեշտակների համար» (Մատթ. 25:41):

Ավա՜ղ ինձ, ավաղ, ինչպիսի՜ ողբ ու ցավ, ինչպիսի՜ նեղություն, ինչպիսի՜ ահ ու դող կպատի նրանց հոգուն, երբ լսեն ահեղ ձայնը բոլոր երկնային զորությունների, «Մեղավորները կրկին դժոխք կընկնեն, նաև բոլոր հեթանոսները, որոնք մոռացան Աստծուն» (Սաղմոս 9:18):

Օ՜, վա՜յ ինձ, վա՜յ ինձ, ինչպիսի՜ լաց պիտի բարձրանա, վայնասուն, սուգ ու շիվան պիտի հետևի հավիտենական դառը տանջանքներին:

Ինչպես սրտակտոր պիտի հառաչեն, կուրծք ծեծեն և խոշտանգեն:

Ավա՜ղ, ավա՜ղ ինձ, ինչպիսին է այն տեղը, որտեղ լաց ու հեծկլտոց է, ատամների կրճտոց, այսպես կոչված, տարտարոս, որից ինքը՝ սատանան է սարսռում: Օ՜ վիշտ և պատուհաս, ինչպիսին է գեհենը՝ իր անշեջ կրակով, որը վառվում է և լույս չի արձակում:

Վա՜յ ինձ, վա՜յ ինձ, ինչպիսի՞ն է այն անքուն և թունավոր որդը:

Ավա՜ղ, ավա՜ղ, ինչպիսի՞ն է այնտեղի հավիտենական շոշափելի խավարը, երբեք չլուսավորվող:

Օ՜ դառնություն և վիշտ, ինչպիսի՞ն են անողորմ և դաժան հրեշտակները, որոնք մշտապես ներկա են գտնվելու տանջանքներին, քանի որ նրանք այնտեղ դաժանորեն խայտառակում և կատաղի ծեծում են: Տանջվողները ամբողջ ուժով օգնություն են կանչում, և չկա ոչ մեկը, որ փրկի նրանց, աղերսում են Տիրոջը, և Նա չի լսում:

Այն ժամ կհասկանան, որ բոլոր երկրային և կենցաղային գործերը դատարկ բաներ էին, և այն, ինչն այստեղ համարում էին բարիք, հիմա արդեն նողկանք է պատճառում, ինչով հաճույք էին ստանում, դառնում է լեղուց և ամեն տեսակի թույնից առավել դառը:

Վա՜յ մեղավորներին, ահա արդարները կանգնած են Թագավորի աջ կողմում, իսկ նրանք ողբում են: Հիմա, երբ արդեն մեղավորները ողբ ու կոծ են անում, արդարները ցնծում են: Այժմ, երբ արդարները զվարճանում են, մեղավորները տոչորվում և տապակվում են:

Վա՜յ մեղավորներին, նրանք դատապարտվում են, իսկ արդարները՝ փառավորվում: Վա՜յ մեղավորներին, երբ արդարները բերկրում են ամեն տեսակի երանություններով նրանք ամեն ինչից զրկված՝ արտասվում են:

Վա՜յ մեղավորներին, որովհետև եթե արդարներին սիրաշահում են, ապա իրենց ստորացնում են: Արդարները սրբության մեջ են, մեղավորները՝ կրակե հնոցի: Արդարները գովաբանվում են, իսկ մեղավորները՝ պախարակվում: Արդարները սուրբ կացարաններում են, իսկ մեղավորները՝ հավիտենական արտաքսման մեջ: Արդարները կլսեն. «Եկեք Իմ Հոր օրհնյալներ, ժառանգեցեք աշխարհի սկզբից ձեր համար պատրաստված Արքայությունը»:

Իսկ մեղավորները. «Հեռացե՛ք Ինձանից, անիծյալներ, հավիտենական հուրը, որ պատրաստված է սատանայի և իր չար հրեշտակների համար»:

Արդարները՝ դրախտում, իսկ մեղավորները՝ անմար հրում: Արդարները բերկրում են, մեղավորները՝ չարաչար տառապում: Արդարները ցնծում են, իսկ մեղավորները՝ կապկված տանջվում:

Արդարները երգում են, մեղավորները՝ լացում: Արդարները ազդարարում են երեքսրբյանը, մեղավորները ողբում են իրենց երիցս նզովքը: Արդարները ճաշակում են երգերի քաղցրությունը, մեղավորները քաշում են իրենց աղետալի կորուստը: Արդարները՝ Աբրահամի գոգում, մեղավորները՝ բելիարի եռացող ալիքներում: Արդարները՝ հանգստի, մեղավորները՝ խռովքի: Արդարները ցողվում են, մեղավորները տոչորվում են բոցով: Արդարները ուրախանում են, մեղավորները պապակվում են դառը տրտմությամբ: Արդարները՝ մեծության, մեղավորները՝ ապականության: Արդարները բարձրացվում են, մեղավորները ավելի ու ավելի խորն են ընկղմվում: Արդարները շրջապատված են լույսերով, իսկ մեղավորները տեղ են գտնում խավարում: Արդարները երանություն են ապրում, մեղավորները՝ ճմլվում:

Արդարները հագեցնում են Աստծո տեսությամբ, իսկ մեղավորները տապակվում են կրակե բոցերով:

Արդարները ընտրյալ անոթներ են, իսկ մեղավորները՝ անոթներ գեհենի:

Արդարները՝ մաքուր ոսկի, փորձված արծաթ, թանկարժեք քարեր, մեղավորները՝ փայտ, եղեգ և ծղոտ, արժանի միայն կրակը նետվելու: Արդարները արքայական ցորեն, մեղավորները՝ կորուսյալ որոմ:

Արդարները՝ ընտրյալ սերմեր, մեղավորները՝ որպես մոլախոտ, կրակի կերակուր: Արդարները՝ աստվածային աղ, մեղավորները՝ գարշանք և ժանտահոտություն: Արդարները՝ մաքուր աստվածային տաճար, մեղավորները՝ դևերի պիղծ բնակարան: Արդարները՝ լուսավոր ապարանքներում, մեղավորները՝ անհատակ անդունդում: Արդարները՝ պայծառափայլության և ճաճանչափայլ լույսերի մեջ, մեղավորները՝ փոթորկող խավարում: Արդարները՝ հրեշտակների հետ, մեղավորները՝ դևերի: Արդարները խրախճանքների մեջ են հրեշտակների հետ, մեղավորները՝ հեծկլտում են դևերի հետ: Արդարները՝ լույսի մեջ. մեղավորները՝ խավարի: Արդարները մխիթարվում են Սուրբ Հոգով, մեղավորները տանջանքների մեջ մորմոքվում են դևերի հետ: Արդարները կանգնած են Տիրակալի Գահի առջև, մեղավորները կանգնած են անանցանելի խավարի առջև: Արդարները միշտ բացեիբաց պիտի նայեն Քրիստոսի դեմքին, մեղավորները անհերթափոխ պիտի կանգնեն սատանայի առջև: Արդարները սովորում են Աստծո գաղտնիքները հրեշտակներից, մեղավորներին բացահայտում են իրենց գաղտնիքները դևերը: Արդարները աղոթքներ են հղում, մեղավորները՝ անդադար լաց: Արդարները գտնվում են լեռնային կացարաններում, մեղավորները սողում են ձորերում: Արդարները՝ երկնքում, մեղավորները՝ անդնդում: Արդարները հավիտենական կյանքում, մեղավորները՝ մահացու կործանման մեջ: Արդարները՝ Աստծո արքայությունում, մեղավորները՝ այնտեղ, ուր սատանան է: Արդարները հաղորդակցվում են Աստծո հետ, մեղավորները՝ սատանայի:

Վա՜յ մեղավորներին, երբ նրանք կբաժանվեն արդարներից: Վա՜յ մեղավորներին, որովհետև նրանց գործերը ի հայտ են գալիս, և սրտի խորհուրդները՝ հրապարակվում: Ավա՜ղ մեղավորներին, որովհետև նրանց խորամանկ մտադրությունները մերկացվում են, և նրանց չար խորհուրդների հոլովվածքը քանդվում է և լլկվում, և մտքերը կշռվում: Ավա՜ղ մեղավորներին, որովհետև նրանք ատելի են սուրբ հրեշտակների համար և գարշելի՝ սուրբ նահատակների համար: Ավա՜ղ մեղավորներին, որովհետև նրանք վռնդվում են ապարանքից: Ավա՜ղ, ինչպիսին է այնժամ զղջումը: Ավա՜ղ, ինչպիսին է այնժամ ողբը, ինչպիսին է այնժամ կարիքը, ավա՜ղ, ինչպիսին է այնժամ փոթորիկը: Զարհուրելի է սրբերից բաժանվելը, էլ առավել զարհուրելի է բաժանվելն Աստծուց:

Արդ, խայտառակություն է՝ կապված ձեռքերով և ոտքերով կրակի մեջ գցվելը: Տառապագին է և ողբալի արտաքին շոշափելի խավարը նետվելը, որպեսզի այնտեղ կրճտացնեն ատամներով և մաշվեն ծանր և հավիտենական տառապանքով: Սարսափելի է, երբ լեզուն տապակվում է բոցերից, տրտմագին է խնդրել մի կաթիլ ջուր և չստանալ: Դառնագին է՝ լինել կրակների մեջ, պաղատել և չստանալ օգնություն: Անանցանելի են թավուտները, և անծայրածիր է վիհը: Բանտարկյալը չի փախչի այնտեղից, կալանավորի համար ելք չի լինի, անանցանելի են բանտի պատերը, դաժան է պահակախումբը, աղջամղջային է զնդանը, անքակտելի են կապանքները, շղթաները՝ անարձակելի: Դժոխային կրակների ծառաները վայրենի են և մոլեգին: Զարհուրելի և մեծ տառապանք պատճառող են տանջող գործիքները: Ճիրաններն ամուր են և անկոտրում: Ձիլերը ամրապինդ

են և կարծր: Կուպրը պղտոր է և եռացող: Թարախոտ է երևույթը հրապարակների: Կարմրած քարածխի պես շիկացած են մահիճները: Տապը անտանելի է: Որդը նողկալի է և գարշահոտ: Դատարանը փակ է՝ ներումի և ողորմության համար: Դատավորը անկողմնակալ է, դատավճիռը՝ անբեկանելի: Հզորների դեմքերը ծածկված են ամոթով ու խայտառակությամբ: Տիրակալները դարձել են խղճուկներ, թագավորները՝ աղքատներ: Իմաստունները դարձել են տգետներ: Բարձրախոս ճարտասանները՝ համր և տհաճ, հարուստները՝ անմիտներ: Չի լսվում շողոքորթների կեղծավոր ճռռոմախոսությունը: Մերկացած է նենգության ծռությունը: Ստությունը վաշխառուների ի հայտ է բերված: Ժանտահոտությունը խեղդում է հոտոտելիքները դրամապաշտների:

Զրի երես է հանված թաքցրած փտությունը կեղծավորների: Տրվող վերքերը հասցվում են ըստ հանցանքի չափի, որոնք ի հայտ են բերված և հրապարակված: Ավա՜ղ մեղավորներին, որովհետև նրանք մաքուր չեն, պիղծ են և զազրելի Աստծո առջև: Ինչպե՜ս են ցեխոտվել և պղծվել նրանց հոգիները: Ինչպե՜ս է գարշահոտում նրանց մարմինը շնությունից, անառակության և վավաշոտության հագեցումից:

Ինչպես են նրանք պղծել հոգին ու մարմինը, չպահպանելով Մկրտության սուրբ հանդերձները: Ինչպե՜ս, առանց ամոթի և խայտառակության, տրվեցին որկրամոլությանն և անառակ հարբեցողությանը, լեցուցանելով իրենց անտակ ստամոքսը, չամրապնդվեցին ժուժկալության մեջ և չսահմանափակվեցին միայն իրենց անհրաժեշտ կարիքների բավարարմամբ, այլ գործածելով իրենց հարստությունը զգայական հաճույքների համար, ինչպես խոզեր, թավալվում էին ցանկական բերկրությունների մեջ: Անցկացրեցին իրենց կյանքի օրերը և տարիները պիղծ խորհուրդներով, չար մտադրություններով, դատարկախոսությամբ և անառակ երգեցողությամբ: Ինչպես կուրության մեջ փոխվեցին նրանց սրտերը, ի միտ չբերելով այն, որ ժամանակին ներդաշնակ էին Քրիստոսի հետ և հրաժարված՝ սատանայից: Ինչպե՞ս շեղվեցին ուղիղ ճանապարհից, քայլելով անհայտության խավարում, տրվելով ծուլության քնին, ընկղմվեցին գեհենի հատակը: Ինչպե՞ս խորթացան առաքինասեր գործերի լույսից՝ սիրելով մեղանչական խավարը, որպեսզի քայլեն լայն և ընդարձակ չարության ճանապարհով: Ինչպե՞ս մոռացան գալուստը մեր Տեր Աստծո և Փրկչի Հիսուս Քրիստոսի, մոռացան նաև Նրա անհամար և անքննելի շնորհները: Եվ մաքրվելով Աստվածային մկրտության ջրով, լուսավորվելով Սուրբ Հոգով և զարդարվելով հոգևոր խաղաղության խնդությամբ, նրանք հանուն փուչ, զազրելի և աննախանձելի հաճույքների, անհոգ գտնվեցին այսպիսի մեծ շնորհների հանդեպ և դարձան ստրուկ՝ պոռնկության և շնության ոգուն: Ավա՜ղ, Աստծո որդեգրությունը թողնողներին և աշխարհի հաճույքներին տրվողներին: Ավա՜ղ, աշխարհի իմաստությանը հետևողներին: Ավա՜ղ, մեղանչական խավարը սիրողներին: Ավա՜ղ, ճշմարտության լույսից հեռացողներին: Ավա՜ղ, մեղքի գիշերում քայլողներին: Ավա՜ղ, շնորհած լուսավոր օրերը թողնողներին: Ավա՜ղ, ծիծաղի չար սովորությանը տրվողներին: Ավա՜ղ, զարդարվողներին այն բանի համար, որպեսզի խոցեն հոգիները՝ շնության անմաքուր հա-

ճույքներով: Ինքնազարդարումը սատանայական հրաշագործություն է, իսկ նրանց համար, ովքեր ցանկանում և փնտրում են փրկություն, այդ ամենը զազրելի բաներ են: Ավա՜ղ, միմյանց զրպարտողներին: Վա՜յ, ականջներին փսփսացողներին և բաժանումներ և խռովություններ առաջացնողներին: Ավա՜ղ, վավաշոտության պատճառով երդում տվողներին: Ավա՜ղ, երդմնազանցներին: Ավա՜ղ, որկրամոլներին, քանի որ նրանց աստվածն իրենց ստամոքսն է (Փիլիպ. 3:19):

Ավա՜ղ, հարբեցողներին: Երանելի է նա, ով այս կյանքում նվաստացնում և խոնարհեցնում է իր անձը, հանուն Աստծո: Նա կմեծարվի ամենազոր Աստծո կողմից՝ փառավորվելով հրեշտակների հետ, նա էլ չի կանգնի այն ահավոր դատաստանի առջև: Երանելի է այն մարդը, ով հարատևում է աղոթքների մեջ, համբերող է պահքի մեջ, պատրաստակամ է հսկումներին, պայքարում և վանում է քունը, ծունկ է խոնարհեցնում՝ Աստծուն փառաբանելու համար, ծեծում է կուրծքը, ձեռքերը բարձրացնում է դեպի լեռները, աչքերը բարձրացնում է երկինք՝ Աստծուն, խորհում է փառքի գահին Նստողի և սրտերն ու երիկամները քննողի մասին (Հայտն. 2:23):

Քանի որ այդպիսինը պիտի քաղցրանա հավիտենական օրհնություններով և կդառնա բարեկամ, եղբայր, որդի և ժառանգորդ Աստծո, դատաստանի օրը Երկնքի Արքայությունում նրա դեմքը կփայլի ինչպես արև: Ով սիրում է ճշմարտությունը, նա դառնում է բարեկամ Աստծու, իսկ ով մշտապես ստում է՝ նա ընկեր է դևերի: Շողոքորթություն ատողը ազատվում է անեծքից: Ով կրում է փորձություններ, պսակվում է որպես

վկա՝ Քրիստոսի Գահի առջև: Ով հարձակումների ժամանակ քրթմնջում և դժգոհում է, վրա հասած վշտերի պահին տրտմում է և պարսավում, այդպիսինը ընկնում է խաբկանքի մեջ և չունի ապավինություն: Հեզը, հանդարտը, խոնարհամիտը գովաբանվում է Աստծո կողմից, հրեշտակների կողմից սիրաշահվում է, մարդկանց կողմից՝ հարգվում: Բարկացկոտ, ցասումնալից և զայրացկոտ մարդուն Աստված ատում է: Այսպիսինը սնվում է դիվային դառնությունից, խմում է օձերի ցասման գինին և անբուժելի թույնը իժերի: Սրտով մաքուրներն ընկալում են Աստծո փառքը, իսկ մտքով պղծվածները և չարիք գործողները տեսնում են սատանային: Մերձավորի հանդեպ անպիտան և վնասակար խորհուրդները հեռացնում են մեզ Աստվածայինի հետ հաղորդակցվելուց: Անուշահոտ շպարներով շպարվողները իրենց դեմքը դիմափոշով սպիտակեցնողները և կարմրացնողները, թանկարժեք քարերով զարդարվողները, որոնք նպատակ ունեն հմայելու և որսալու ուրիշների հոգին՝ անմաքուր ցանկություններով և անպիտան կրքերով՝ ի հաճություն սատանայի, այսպիսիներին դատաստանի օրը տեղ չի լինելու առաքինիների և հավատարիմների մեջ, այլ պիտի տանջվեն Աստծո պատվիրանները անարգողների հետ: Ով կրքոտությամբ է նայում ուրիշի բարիքներին և գեղեցկությանը, այսպիսինը կզրկվի Դրախտի գեղեցկությունից: Ուրիշի մեղանչումով ուրախացողները, իրենք են ընկնում մեղքի մեջ: Ուրիշինը ցանկացողները, զրկվում են իրենց ունեցածից էլ և կործանվում: Հպարտները, փառամոլները, մարդահաճոները դատապարտվում են սատանայի հետ:

Կեղծավորները նույնպես պիտի տանջվեն սատա-

նայի հետ: Մարմինը չափից և անհրաժեշտից ավելի կերակրողները հոգին մատնում են հավիտենական սովի: Ով մտադրված և առանց ստիպողության մեղանչում է, և չի զղջում, նա մատնվում է տառապանքի՝ անհավատների հետ: Նրանք, ովքեր ասում են. «Երիտասարդության ժամանակ մեղանչենք, իսկ ծերությանը՝ ապաշխարենք», գտնվում են սատանայական հմայության և անարգանքի մեջ, որովհետև գիտակցաբար և ազատ կամքով են մեղանչում: Սրանք բարեհաճությամբ են տրվում մեղքին և ապաշխարության չեն արժանանում, այլ երիտասարդ տարիներին մահվան մանգաղով հնձվում են, ինչպես Հուդայի թագավոր Ամմոնը (Բ Մնացորդ. 33:21-25), որ բարկացրեց Աստծուն՝ իր սրբապիղծ մտադրություններով և գարշելի մտածումներով: Ունայնամիտ են դարձել և մթագնել են տղայամիտ սրտերը նրանց, ովքեր ասում են. «Վաղը կապաշխարենք, իսկ այսօր՝ մեղանչենք»: Այդպիսիները կորստյան են մատնում ժամանակը և պղծելով՝ ապականում են մարմինը, աղտոտում են իրենց հոգին և մթագնում մտածումները, խավարեցնում միտքը և լռեցնում խիղճը: Չեն մտածում, որ վաղը, միգուցե, մահն իրենց հափշտակի: Ով չի լացում շնության մեղքի մեջ ընկնելուց, ով չի ողբում անառակության մեղքի պատճառով, ով ցավ չի քաշում պիղծ արվամոլության համար, դառը չի լացում աղտեղի ձեռնաշարժության համար, այդպիսի մեղսագործներից ոչ ոք ընդունակ չէ ի սրտե զղջալ գործած մեղքերի համար և ոչ էլ՝ խուսափել հետագա մեղքերից: Նրանք, ովքեր չեն փնտրում, թե ինչ է կորցրել իրենց հոգին, ձեռք չեն բերում և այն, ինչը առաջնորդում է փրկության: Նրանք, ովքեր չեն քննում,

թե ինչպիսին են՝ վնասի վրա վնաս են ավելացնում: Ոչ միայն շահ չեն ստանում, այլև գլուխներն էլ են կորցնում: Նրանք, ովքեր խելամտորեն չեն ջանում և արթուն չեն աղոթքների մեջ, գերի են ընկնում իրենց ունայն և անպիտան մտածումների ձեռքը, իսկ այդպիսի գերիները թեկուզև չուզենալով, անկախ իրենց կամքից, ընկնում են չար սովորության լծի տակ: Ով անուշադրությամբ է մասնակցում աստվածպաշտությանը, նա շատ մեծ բաներից է զրկվում: Ով ուշադրությամբ և փափագով չի լսում աստվածային ընթերցանությունը, այլ տրվում է քնկոտ ծուլության, նա հինգ հիմար կույսերի հետ դուրս կմնա Երկնավոր Փեսայի ապարանքներից: Պահքի հանդեպ, որպես փրկության միջոց, անհոգ եղողները մխրճվում են որկրամոլության մեջ և հաղթվում մեղքից, որի հետևանքով, շնության կիրքը հարձակվում է նրանց վրա: Աստծո պատվիրանները չպահողները որսվում են դևերի կողմից և դատապարտվում գեհենի հրին: Սուրբ Եկեղեցուց և Սուրբ Խորհուրդներից (Հաղորդությունից) հեռացողները դառնում են Աստծո թշնամիներ և դևերի բարեկամներ: Անաստված աղանդավորների հերձվածները կխայտառակվեն, այլադավան ազգերը կծաղրվեն, նմանապես և հրեաների բազմությունը. բերանները աստվածամարտ հրեաների կպապանձեցվեն: Երբ սրտեր և երիկամներ քննող Ահեղ Դատավորը նստի դատելու, Որի խոսքը երկսայրի սրից առավել սուր է, նույնիսկ բաժանում է հոգին՝ մարմնից, անդամներից և ուղեղից, որը դատում է սրտի խորհուրդները ու մտածումները, այնժամ կտեսնես ոչ միայն մի մասն ամբողջից, այլ բոլորը բացեիբաց, ամեն ինչը ջրի երես ելած: Այնժամ գայլը չի ծածկվի գառան մոր-

թով, և դրսի արտաքին գործերը չեն ծածկի ներքին խորհուրդները: Չկա արարած, որ հայտնի չլինի Արարողին, այլ բոլորը մերկ և բացահայտված են Նրա աչքերի առջև: Ուրեմն, կրքերի դեմ մարտնչենք Աստծո պատվիրաններով, խոնարհեցնենք հպարտ խորհուրդները, ելնենք պատերազմի՝ սատանայի դեմ, պայծառանանք հոգևոր սթափությամբ, ճնշենք մեղավոր տենչանքները, հոգանք ձեռք բերել պատրաստակամություն և սեր՝ աղոթքի հանդեպ, մտքի արթնությամբ, մաքուր խղճմտանքով, մշտական ժուժկալությամբ, պահքի ջանասիրությամբ, անկեղծ սիրով, իրական մաքրությամբ, չպղծված ողջախոհությամբ, անշողոքորթ խոնարհությամբ: Ձանանք ձեռք բերել սաղմոսերգություն, ընթերցանություն՝ առանց փառամոլության, ծնրադրություն՝ առանց հպարտության, աննվազ աղաչանք, մաքուր վարք, խոսքերի ճշմարտացիություն, ջանասիրություն՝ հյուրընկալության մեջ, ողորմություն՝ առանց խորհրդածության, աստվածահաճո համբերություն: Կանգնեցնենք մաղձոտության գետերը, ոչնչացնենք բարկությունը, հեռացնենք մեզանից ձանձրույթը, կտրենք ցասումը, մերժենք տրտմությունը, չորացնենք արծաթսիրությունը (դրամապաշտությունը), որպեսզի չվախենանք համընդհանուր մահվանից, մարդկային ցեղի այս հնձվորից, չվախենանք մարդկանց այս կորուսիչից:

Իրական մահն այն չէ, որ բաժանում է հոգին մարմնից, այլ այն, որ հեռացնում է հոգին Աստծուց: Աստված է կյանքը, և ով հեռացնում է իրեն Նրանից, նա մահանում է և չունի համարձակություն Աստծո առջև, որովհետև հեռացվել է կյանքից: Իրական մահը սատանայից է: Մահվան հայրը՝ սատանան, կանգնած է՝ ինչպես ամուր զինված ռազմիկ, պատրաստ՝ հարձակվելու մեր վրա սուրբ օրերին, որպեսզի գցի իր իշխանության տակ և հետո էլ ասի. «Հաղթեցի Քրիստոսի զինվորին՝ ցույց տալով նրան կանացի գեղեցկություն, հմայեցի նրա լսողությունը, կործանեցի հպարտությամբ և որկրամոլությամբ, ոտնատակ արեցի կրքերի մեջ, գայթակղեցի հարբեցողությամբ՝ հեռացնելով նրան Աստծուց, և գցեցի անդունդը թափառումների»:

Թույլ չտանք պիղծ դևերին՝ ծաղրելու մեզ, քանի որ մենք Աստված ունենք, որը մեր Փրկիչն է, իսկ դևերը՝ մեր կորուսիչը: Ունենալով այս մահկանացու մարմինը, մենք չենք խուսափի մահվանից, բայց չխռովվենք, այլ համարձակությամբ ելնենք պայքարի՝ չար դևերի դեմ հաղթանակ տանելու բաղձանքով: Եթե մենք մեր սրտերի մեջ ունենանք Աստծո երկյուղը և հոգում կրենք մահվան հիշողությունը, այնժամ մեզ վրա թող սպառազինված ելնեն բոլոր դևերը, որովհետև նրանք էլ չեն կարող մեզ հասցնել և ոչ մի վնաս, այլ նրանք կնմանվեն խոյերի, որոնք առանց որևէ հաջողության խոյահարում են պարիսպը: Մեր պարիսպն անխորտակելի է, քանի որ մեզ հետ է մեր Տեր Աստվածը, Որին վայել է փառք, պատիվ և իշխանություն հավիտյանս հավիտենից: Ամեն: